Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

213

ՀՈՒՇԱՏԵՍ

(15 x 11)
1/3
2017

ՀՐԱՏԱՐԱԿ. Հ. Լ. Կ. ՅԵ. Մ. ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ

ՊԱՏԿՈՐԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ



ԵԵՐԵՎԱՆ 1925 Թ.

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՍՍՐ
1-239/ցր

Դրստեպվար № 209 բ. Տիրաժ 5000

Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

ԸՆԿԵՐ ՊԻՈՆԵՐՆԵՐ,

Այս գրքույկի նպատակն է ծանոթացնել պատկորներին, թե ինչպես պետք է նրանք աշխատեն, ինչից սկսեն և ինչից գրեն։ Դրա մասին շատ պատկորներ չունեն պարզ պատկերացում։

Մենք հուսով ենք, որ ամեն մի պիոներ, որը մասնակցում է կոլեկտիվի պատի լրագրին, «Պիոներ-կանչին», «Պիոներ» հանդեսին, «Ավանգարդին», կկարդա այս գրքույկը։

Սրա մեջ կան շատ պակասություններ, որի պատճառով խնդրվում է բոլոր պատկորներին գրել, թե ինչ է պակասում, ինչ սխալներ կան և ինչ հարցեր են մութ մնացել։

Համոզված ենք, որ այս փոքրիկ պատկորի հուշատետրը իր նպատակին կծառայի։

Հ. Լ. Կ. ՑԵ. Մ. Կ կոմիտե
կից Պ. Պ. Կեցց բյուրո

Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՊԱՏԿՈՐՆԵՐԸ.

Պիոներական բոլոր հանդեսները, թերթերն ունեն իրենց պատանի թղթակիցները—պատկորները։ Թղթակից կոչվում է նա, ով գրում է թերթում կամ հանդեսում, շրջապատողների կյանքից, դանազան կազմակերպությունների աշխատանքների մասին, և այլն։

Պատանի թղթակիցներն իրենց թերթերում և հանդեսներում պետք է նկարագրեն պիոներական կազմակերպության կյանքը, աշխատանքները, գյուղի և քաղաքի պիոներների, դպրոցի, ընտանիքի, անապատանների և այլ խնդիրների մասին։

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԳՐԵԼ.

Պատկերների մեծամասնությունը պիոներ են, աշխատում են ողակում և կոլեկտիվում։ Ահա հենց ողակի կոլեկտիվի ամբողջ կազմակերպության աշխատանքներն է, որ պետք է նկարագրել, իսկ դրա համար պատկերն ակտիվ կերպով պետք է մասնակցի կոլեկտիվի բոլոր աշխատանքներին։ Չի կարելի գրել այն բանի մասին, ինչ որ չգիտես և չես տեսել։ Գրիր բոլորը, ինչ որ նոր է և հետաքրքիր։ Գրիր աշխատանքների լավ կողմերի մասին, հաջողությունների, բայց և մի մոռացիր գրել պակասությունների, բացասական կողմերի մասին։ Թող ընկերները, ողակը, կոլեկտիվը և վերջապես բոլոր պիոներները կարդան և աշխատեն յեղած սխալներն ուղղել։

Յերբ գրում ես այս կամ այն սխալների մասին, անպայման ցույց տուր, թե ինչպես ուղղել և ինչ է հարկավոր դրա համար։

ԳՐԻՐ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ.

Պիոներներն ոդից չեն կախված, նրանց շուրջը կան բազմաթիվ յերեխաներ։ Որինակ՝ դպրոցում կան շատ փոչպիոներներ, փողոցում անապատան յերեխաներ. այդ յերեխաների կյանքը նույնպես պետք է նկարագրել։ Վերցնենք դպրոցը. այստեղ կարելի յե գտնել շատ հետաքրքիր նյութեր թերթի կամ հանդեսի համար։ Որինակ՝ ինչպես են ընթանում դպրոցական պարապմունքները, ինչպես են պիոներները վերաբերվում դեպի դասերը, ինչպիսի աշխատանք են տանում աշակերտության մեջ, ուսուցիչների և աշակերտության փոխհարաբերությունը, և այլն։

Վերցնենք ընտանիքը—ինչպես են ծնողները վերաբերվում պիոներներին, փոխվե՞լ է արդյոք պիոների վարքը ընտանիքում այն որից, յերբ նա մտել է կազմակերպության մեջ, ոգնո՞ւմ է արդյոք ծնողներին, ինչպիսի աշխա-

տանք է կատարում տանը, կատարում է արդյոք պիոներական սովորությունները, և այլն։

Այդ բոլորը հետաքրքիր հարցեր են, վորոնց պատասխանը պատկորները պետք է վոր աշխատեն տալ։

ԳՐԻՐ ԱՅՆ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ, ԻՆՉ ՎՈՐ ԳԻՏԵՍ.

Յերբեք հույս չդնես զանազան լուրերի վրա. գրիր միայն այն բանի մասին, ինչ ինքդ լավ գիտես. նախքան քո գրելը լավ իմացիր, տեղեկացիր, ծանոթացիր նյութի հետ, ինչի մասին դու պետք է գրես։ Որինակ՝ պետք է գրես անապատանների մասին, գնա նրանց մոտ կայարան կամ շուկա, ուսուցիչներիր նրանց կյանքը, իմացիր՝ ինչպես են իրենց ժամանակն անցկացնում, վորտեղ են քնում, ինչով են հետաքրքրվում, և այլն։ Այդ բոլորից հետո նոր գրիր պատի լրագրին, թերթին կամ հանդեսին։

ԳՐԻՐ ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Շատ յերեխաներ են կարդում մեր հանդեսը՝ «Պիոներ-կանչը», հետևապես պատկորը պետք է գրի այնպիսի բաներ, ինչ վոր հետաքրքրում է բոլորին և վոչ թե միայն իրեն։

Չպետք է զբաղվել միայն աշխատանքները չոր ու ցամաք թվելով, այլ և անհրաժեշտ է բերել փաստեր, նկարագրել։ Մի գրիր այնպիսի բաների մասին, վոր հայտնի յե առանց այն էլ բոլորին։

ՊԱՏԿՈՐԻ ԶԵՆՔԸ.

Վորտեղ էլ լինես, միշտ պահիր քեզ մոտ մատիտ և թուղթ. դա քո զենքն է։

Յերևակայիր՝ ինչպիսի վատ դրություն է ստեղծվում, յերբ պատկորը մի վորևե տեղ նկատում է կարևոր յերևույթ, ուզում է գրել, ձեռքը տանում է գրպանը... վոչ թուղթ կա, վոչ էլ մատիտ։

ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ.

Պատկոր լինել, դա չի նշանակում գրել անթիվ նյութեր։ Միշտ հիշիր Լենինի խոսքերը՝ «ԼԱՎ Ե ՔԻՉ, ԲԱՅՑ ԼԱՎ»։ Գրիր ամիսը մեկ-յերկու նյութ, բայց լավ աշխատիր նրանց վրա. շատ ոգուտ կլինի և քեզ համար և ուրիշներին։ Մի ցվրվիր՝ յերբ չես վերջացրել գրել մեկը, մի սկսիր մյուսը, այլ կերպ վոչինչ չի դուրս գա։

Լինում են այսպիսի դեպքեր.— ուղարկում են թերթին կամ հանդեսին նյութ, վորտեղ գրված է, թե ինչպես են անցկացրել պիոներական տարեդարձը։ Այդ նյութն ուղարկում են մեկ ամսից հետո կամ ավելի ուշ. հասկանալի յե, վոր այդպիսի գրվածքները չեն տպվի թերթի մեջ. ուշացրած նյութերն արդեն հետաքրքիր չեն լինում։ Պատկորն այդ բանի վրա իր ուշադրությունը պիտի դարձնի. յերբեք մի հետաձգիր գրել տեղեկությունները. տեսար մի հե-

տաքրքիր բան, ծանոթացար նրա հետ մոտիկից, հանդիսատես յեղար կամ մասնակցեցիր մի վորևե հեղափոխական տոն անցկացնելուն, անմիջապես գրիր և ուղարկիր։ Լինել ճշտապահ— դա շատ կարևոր է պատկորին։

Սովորեցրու քեզ ճշտապահության ամեն ինչում։ Ճիշտ նշանակված ժամին ներկա յեղիր կոլեկտիվի հավաքույթներին, և այլն։

ՍՈՎՈՐԻՐ ԳՐԵԼ.

Վոչ վոք մի անգամից պատկոր չի ծընվել։ Պատկոր դառնալ կարող է ամեն մի պիոներ, հարկավոր է միայն լավ գրել սովորել։ Հետևիր այն ուղղումներին, վորը խմբագրությունն անում է քո նյութերում։ Քո նյութը տպագրվելուց հետո վերցրու թերթը կամ հանդեսը և քո հուշատետրում նշանակիր, ինչ վոր ուղղված է կամ դուրս գցված։ Բայց վորպեսզի դու կարողանաս այդ անել, այսինքն ստուգել, գրիր յերկու

որինակ. մեկը պահիր քեզ մոտ, մյուսն ել ղրկիր խմբագրության, վորպեսզի տպագրվելուց հետո կարողանաս համեմատություն անել և նկատել ուղղված մասերը։ Յեթե դու այդպես անես, մյուս անգամ արդեն համեմատաբար լավ կը-գրես, կաշխատես չանել նույն սխալը։

Հարկավոր է նաև հետևել ուրիշ-ների գրվածքներին. աշխատիր գտնել, թե նրանցից վորն է լավ գրված, վորը վատ—դա քեզ ոգուտ կբերի։ Մի բան պատկորը չպետք է մոռանա, վոր ամեն մի նյութ չի տեղավորվում թերթում կամ հանդեսում. սովորաբար այնպես է լինում, վոր ուղարկված միքանի նյու-թերից տպվում են մեկը-յերկուսը, մնա-ցածները չեն տպագրվում այն պատճա-ռով, վոր լավ չեն գրված, և կամ թե տեղ չի լինում թերթում։

Միքանի պատկորներ այդպիսի դեպ-քերում ասում են. «Մեր գրած նյու-թերը չտեղավորեցին, մենք այլևս չենք գրի»։ Լավ պատկորն այդպես չի

ասի։ Յերբեք մի ընկճվիր. չընդունեցին այս անգամ քո նյութը, աշխատիր մյու-սը գրել, յերկրորդ անգամ, և այլն։ Լավ նյութը միշտ թերթում իր տեղը կստա-նա. չե՞ վոր պատկորը չի գրում նրա համար, վոր ինքը և ուրիշները կարդան թերթում իրենց ազգանունը, հետևա-պես չպետք է հուսահատվել և վիրա-վորվել այդպիսի դեպքում։

ՄԻ ՄՈՌԱՑԻՐ ԿՈԼԼԵԿՏԻՎԻ ԱՇԽԱ-ՏԱՆՔՆԵՐԸ.

Վատ պատկոր է նա, ով յետ է մնում կոլլեկտիվի աշխատանքներից։ Մենք արդեն ասացինք, վոր դու կա-րող ես նրա աշխատանքների մասին գրել այն ժամանակ, յերբ ինքդ մաս-նակցես այդ աշխատանքներում։ Ամե-նից առաջ աշխատիր լավ հիմքերի վրա դնել կոլլեկտիվ պատի լրագիրը։ Գրիր նրանում, ոգնիր մյուսներին, մի խոս-քով այնպես արա, վոր վատ լրագիր չլինի։ Կան պատկորներ, վորոնք մաս-

նակցում են միայն թերթերում, հանդեսներում և յերեսի վրա յեն թողնում կոլլեկտիվի լրագիրը։ Գիտակից պատկերն այդպես չի վարվի, չպետք է ձգտել հեռու։

ԳՐԻՐ ՄԻ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ԿԱՐՃ.

Ամենից առաջ գրիր մեկ կամ միքանի բանի մասին, բայց կապված մեկը մյուսի հետ։ Որինակ՝ չի կարելի մի թղթակցության մեջ գրել եքսկուրսիայի մասին և միևնույն ժամանակ թերթի բաժանորդագրման մասին։

Թերթում տեղ քիչ կա, բայց ուղարկված նյութերը շատ են. վորպեսզի թերթում տեղավորվի, շատ նյութեր

հարկավոր է գրել կարճ և բովանդակալից։ Յերբեմն պիոներները գրում են վորևե զբոսանքի մասին այսպես. «Մենք հավաքվեցինք պիոներական տան բակում, բացակա եյին այսինչ պիոներները, մեկի գլխարկն եր մնացել տանը, միքանիսի պաշարը քիչ եր, կոլվարի տրամադրությունը բարձր եր», և այլն։ Նյութի մեծ մասը հատկացվում է այն բաներին, ինչ վոր այնքան էլ հետաքրքիր չե և չի ներկայացնում կոլլեկտիվի աշխատանքն, այլ իմիջի այլոց հարցեր են, վորոնց մասին կարելի յե չգրել։

Վորպեսզի թղթակցությունն ավելի ախորժակով կարդան, հարկավոր է վոչ միայն գրել հետաքրքիր բաների մասին, այլ բովանդակալից, կենդանի և հետաքրքիր։

ԻՆՉՊԵՍ ԱՐՏԱԴՐԵԼ.

Դու նյութը գրեցիր, հիմա հարկավոր է մաքուր արտագրել և ուղարկել

խմբագրության։ Այստեղ էլ պետք է հետևել վորոշ կանոնների։ Ամենից առաջ գրիր թանաքով, վորովհետև մատիտի գրածը շուտ է ջնջվում և դժվար է կարդացվում, վորի պատճառով խմբագրությունը և գրաշարները դժվարությունների կհանդիպեն։ Գրիր թղթի մեկ յերեսում, մյուս յերեսը թող մաքուր, այն ժամանակ խմբագրությունը հեշտությամբ կարողանում է ուղղել նյութերը, և ամենագլխավորն այն է, վոր տպարաններում բանվորներին հեշտ է լինում աշխատել, վորովհետև ավելորդ ժամանակ չեն կորցնում թերթը շուռ տալու։

Գրելիս աջ կամ ձախ կողմում թող մի փոքրիկ դաշտ և տողերի մեջ մատի չափ հեռավորություն, վորպեսզի խմբագրությունը կարողանա ուղղումներ կամ փոփոխություններ կատարել։ Գրիր մաքուր, աշխատիր կեղտոտ չլինի գրածդ. յերբ վերջացրիր գրելը, ստորագրիր քո անունը և ազգանունը,

գրիր նաև ամսաթիվը, մի մոռացիր նաև հասցեն։

Յեթե չես ուզում ստորագրել ազգանունդ, այդ դեպքում գրիր քո կեղծ անունը, բայց առանձին թղթով հայտնիր խմբագրության քո իսկական ազգանունը։

ՆԿԱՐՆԵՐ ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ.

Նկարել ամեն պիոներ չի կարող, բայց ամեն մի նյութ հետաքրքիր կլինի, յեթե նրա հետ ուղարկվի նաև ձեռանկարը։ Փորձեցեք այդ բանն անել. բոլորովին մի մտածեք, վոր լավ չի դուրս գա. խմբագրությունն ունի իր նկարիչը, վորը ձեր նկարները կուղղի և հիմք ունենալով այդ, նորից կնկարի։ Կարևոր է միայն, վոր դուք տաք նկարի անհրաժեշտ մասերը, մնացածը նկարչի գործն է, նա կանի։

Թերթին և հանդեսին հաբկավոր են նաև պատկերները։ Մեր պիոներները շատ են սիրում նկարվել, այդպիսի

1-83919



դեպքերում մեկ որինակն ուղարկեք խմբագրության, բայց գիտցեք, որ բոլոր պատկերները, իհարկե, այնքան էլ հարմար չեն թերթում կամ հանդեսում տեղավորելու համար։ Որինակ՝ մի պատկեր, որի մեջ նկարվել է մի ամբողջ կոլեկտիվ պինդ նստած մեկը մյուսի կողքին և դեմքերն առաջ։ Արդյոք հետաքրքիր է այդ պատկերը։ Այո, հետաքրքիր է, բայց միայն նրանց համար, ովքեր նկարվել են. այն էլ դեռ հարց է։ Պիոներներին բոլորը տեսել են այնպես, որ այդ ձևի պատկերները հարմար չի լինի տպել թե թերթում, թե հանդեսում։

Վերցնենք մեկ ուրիշ պատկեր, որի վրա պատկերացված է պիոներների աշխատանքը. կատարվում է մի որևե գործողություն։ Այդ նկարն արդեն հետաքրքիր է։

Ուրեմն պատկերից պահանջվում է, որ նա ներկայացնի պիոներների աշխատանքը, կյանքը կենդանի կերպով, բայց ոչ միայն դեմքեր։

ՊԱՏԻ ԼՐԱԳԻՐ.

Բացի տպագրված հանդեսներից ու թերթերից ամեն մի կոլեկտիվում կա պատի լրագիր։ Այդ լրագրին պատկորը պետք է մասնակցի ակտիվ կերպով։ Պատի լրագիրը պատկերացնում է կոլեկտիվի կյանքը։ Պատի լրագրի բովանդակությունը մոտավորապես պետք է լինի հետևյալը... Մի փոքրիկ նյութ այն աշխատանքների մասին, ինչ վոր տարված եր և տարվում է կոլեկտիվում, ինչպես է ապրում կազմակերպությունը, ողակի աշխատանքների մասին, վոտանավորներ, պատմվածքներ, ռեբուսներ, պիոներների սխալ քայլերի մասին, խաղեր, գվարճանքի անկյուն, ֆելյետոններ և այլն։

Մի ժամանակ պիոներները շատ էին սիրում ճառեր գրել միջազգային դրության մասին, այստեղից այնտեղից արտագրել և նյութը վերջացնել այսպես – «ԿԵՑՑԵ ԱՅՍ, ԿՈՐՉԻ ՄՅՈՒ-

ՍԸ», և նման բաներ։ Միջազգային գրության մասին կարելի է կարդալ մյուս թերթերում։ Մի բան չպիտի մոռանալ, որ կոլեկտիվի լրագիրը կարդում են ոչ միայն կոլեկտիվի պիոներները, այլ մյուս կոլեկտիվների պիոներները, բացի դրանից և ոչ-պիոներները, (կոմյերիտականները, գյուղացիները, բանվորները, աշակերտները և այլն)։ Պատի լրագիրն ամենալավ հայելին պետք է լինի, որտեղ թե կոլեկտիվն իրեն պարզ կտեսնի և թե ուրիշները նրան լավ կտեսնեն։

Ոչ միայն նյութերը կարելի է հավաքել, այլ և հարկավոր է լավ դասավորել, լավ արտագրել պատի լրագրում, որպեսզի նա գրավիչ լինի։

Ամենից առաջ խոսենք լրագրի չափի մասին։ Մեզ մոտ սովորաբար անցյալում, և դեռ այժմ էլ, պատի լրագրները լինում են մեծ և յերկար այնպես որ, յեթե ուզում ես կարդալ, ներքևում գրված նյութերն,

ստիպված ես լինում չոքել և յերկար ժամանակ կռանալ, իսկ յեթե ցանկանում ես կարդալ վերևում գրված նյութերը, պետք է լինում նստարանի վրա բարձրանալ։

Պատի լրագիրն ավելի լավ է անել ոչ թե յերկար՝ դեպի վերև, այլ լայն, ինչպես որ ցույց է տրված նկարում։ Յեթե լրագիրը գրվի այդ ձևով, այն ժամանակ հեշտ կլինի կարդալ թե կարճահասակին և թե բարձրահասակին, բացի դրանից՝ այդ ձևի թերթը կարող են կարդալ, նկարել և գրել միքանի հոգի միասին, իսկ այդ նույնպես կարևոր է։ Պատի լրագրի վերնագիրը (գլուխը), որքան կարելի է, գեղեցիկ արեք, իսկ լրագիրը տվեք գրելու այն պիոներներին, որոնց ձեռագիրը պարզ է։

Նախ քան գրելը հաշվեցեք՝ ինչքան նյութ կա, դրանցից որը պետք է գրել, և որքան տեղ կա։ Թե չե կսկսեք լրագիրը գրել, բոլորը չի տեղավորվի, և կարևոր նյութը կարող է մնալ դուրս.



կամ, ընդհակառակը, նյութը քիչ կլինի, և լրագրում տեղին տեղ բաց կմնա։ Դասավորեցեք նյութն ըստ բաժինների— վոտանավորները տեղավորեցեք այնտեղ, վորտեղ նրանք ավելի հարմար են իրենց բովանդակությամբ։ Պատմվածքները լրագրի ներքևում, և այլն։ Ամեն մի նյութը պետք է բաժանե մեկը մյուսից փոքրիկ գծով, մի բաժինը մյուսից նույնպես գծով կամ նկարներով։

ՄԻՔԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԿՈՐԻՆ.

1. Հետևիր կոլեկտիվի կյանքին և հետաքրքրվիր նրա աշխատանքներով, նույնպես և շրջապատող յերեխաների կյանքով։ Բոլոր հետաքրքիր բաների մասին գրիր խմբագրության։

2. Ցեղիր ճշտապահ, մի վորևե հետաքրքիր բան նկատեցիր, անմիջապես նշանակիր քո հուշատետրում և

գրիր թերթին կամ հանդեսին։ Ուշացրած նյութը կորչում է առանց օգուտ տալու։

3. Գրիր միայն այն, ինչ վոր ինքդ տեսել ես. ուրիշների ասածը լավ ստուգիր։

4. Գրիր կենդանի, կարճ, բովանդակալից և պարզ։

5. Սովորիր գրել—հետևիր խմբագրության արած ուղղումներին, մի ընկճվիր և մի հուսահատվիր. յեթե մի նյութդ չընդունեցին, գրիր նորը։

6. Մի ծածկի կոլեկտիվի աշխատանքների պակաս կողմերը։ Սխալների վրա մենք սովորում ենք։

7. Գրիր թանաքով, մաքուր, հասկանալի, թերթի մի յերեսի վրա. մի մոռացիր գրել աղգանունդ և հասցեդ։

8. Աշխատիր մասնակից դարձնել թերթին կամ հանդեսին մյուս յերեխա-

ներին ես մի մոռացիր կոլեկտիվի պատի լրագիրը, ուժեղացրու նրան։

9. Ամեն կերպ աշխատիր տարածել «Պիոներ» հանդեսը, «Պիոներ-կանչը» և «Ավանգարդը»։

50

ՀՀ Ազգային գրադարան
NL0863939

1925
2391

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.